ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Բաժնորդագինը որոշել Թողուած է բաժնորդի կամքին.
Ամերիկայի համար կընդունուի ամսական վինչև 20 սենթ
Պարսկաստանի » » » 40 կոպէկ
Եւրոպայի և այլ տեղերի համար » » » 1 Ֆրանգ
Հատուկ կը ծախուի ամեն տեղ 10 սանթիմ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը զրկելու վոստի ծախքը։
Նամակ և ծրար պէտք է զրկել հետևեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Դ ՏԱՐԻ ԹԻԻ 20

1888 ԴԵԿՏԵՄԲԵՐ 8

ՆՈՅԵՄԲԵՐ 26 (Հ. Տ.)

ԳԱՒԱՌ

Կը հրատարակուի Հ. և Շբթ. օրեր

ՊԱՏՄԱՌՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կընդունի իրեն զրկուած գրութիւններն։
Պարտաւոր չէ վերադարձունել չհրատարակուած ձեռագիրներն։
Յանուցմունք կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Rue Vacon, 50)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժողովուրդը եւ իւր առաջնորդներ։ — Ամենայն Հայոց կաթողիկոսի ճանապարհորդութիւնը. — Բաֆֆիի մասին. — Ֆադաթական յանցանքով ձերբակալութիւն. — Հայերն։ — Սրտի վկայութիւն (ոտանաւոր). Արմէնիայի պատասխանները. — Հայեր ի Թուրքիա։ — Տեղական. — Նոր հրատարակութիւններ. — Արտասահմանի լուրեր։ — Ծանուցմունք. — Բանասիրական (իմ ճանապարհորդական տպաւորութիւններ)։

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ
ԵՒ ԻՒՐ
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

Մեր ընթերցողները տեղեկացած են Ամերիկայի նախորդ թուերէն թէ ժողովուրդը ի՛նչպիսի ոգեւորութեամբ ընդունելութիւն արած է Ամենայն Հայոց Վեհ. Մակար Կաթողիկոսին իւր ճանապարհորդութեան մէջ և Կ. Պոլսի նորընտիր Պատրիարք-Ամեն. Խորէն Եպիսկոպոսին երբ Նորին Սրբազնու-

թիւնն իւր պաշտօնական առաջին հանդիսաւոր այցելութիւնն արաւ Սուլթանի պալատը և Բ. Դուռը։

Բայց յայտնի է ընդհանրապէս որ Մակար Կաթողիկոս ժողովրդականութիւնն չվայելեր Ռուսահայերին մէջ և Խորէն Պատրիարքն ալ մինչեւ այժմ մի հրապարակային յայտնի պաշտօն վարած չլինելով, իւր գործունէութեան ապացոյցներն և իւր աղգային-քաղաքական գոյն որոշ կերպով ցոյց տուած մէկը չէ։

Ի՞նչ է ուրեմն որ կը դրդէ ժողովուրդին այսչափ ոգեւորութեան ցոյցեր անել։

Ժողովուրդը իւր այդ ցոյցերով ա՛չ Մակարը և ա՛չ ալ Խորէնը անձնապէս յարգած լինել կուզէ, այլ ցոյց կուտայ թէ ինք արչ՛ափ գիտէ յարգել Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կ. Պոլսի պատրիարքութիւնը. այդ ոգեւորութեան ցոյցեր պաշտօնեաներին կը վերաբերին և ոչ թէ անձերին։

Այդ ոգեւորութեան ցոյցեր ստիպողական պայմաններու տակ չեն կրնար ըլլալ։ Ժողովուրդը ինքնաբերաբար կուգայ իւր սրտի զգացումներն ի յայտ բերելու։

*Ժողովուրդին իւր պաշտօնական առաջին հանդիսաւոր այցելութեան առթիւ Ամենայն Հայոց Վեհ. Մակար Կաթողիկոս ժողովրդականութեան

ՂԱՅԳՈՂ (1)

Ես ինչ-որ ժամանակ էի կարդացել, որ ամեն մարդ ունի իր ուրվականը, որը հետևում է նրան, երբ նա գնում է ուրիշների մոտ, և որ ամեն մարդ ինքն է ստեղծում իր ուրվականը։ Այսօր ես ինքս եմ ինձ համար ուրվական։ Ես ինքս եմ ինձ հետևում, ինքս եմ ինձ լսում, ինքս եմ ինձ ստիպում ամեն ինչ անել։ Ես

յօդուածը կը ծայր իբրեւ մեռեալ տառ։ Հայաստան պիտի յանձնուի այն պետութեան որ ցոյց կուտայ բաւական խմաստութիւն, մարդկութիւն և արիութիւն պաշտպանելու և յարգելու հաժար Հայոց իրաւունքները։ Այս օրինակ կացութեան մը առջեւ Անգղիա, որ կը կեղծէ պաշտպան հանդիսանալ անզօրին, պէտք էր ըլլալ արթուն և կենդանի։ Սակայն նա կը թուի լինել կամ ոգեւ և կամ անտարբեր՝ այս դժբախտ Հայոց արդար աղաղակց։ Դիպաց տրամաբանական ուղղութիւնը նկատելով կերեւի թէ վերջապէս Ռուսիա պիտի տիրանայ Հայաստանի և պիտի հաստատէ բարեկամական յարաբերութիւն Հայոց հետ ի մեծ կոտուտ Թուրքիոյ։ Եւ երբ անգամ մը Հայաստան վայելէ ոեւէ բարւոք կառավարութիւն մը, վստահաբար կրնանք ըսել թէ Հայ հանճարը պիտի արագադրէ վերածնութեան (renaissance) ոակեզէն դար մը։ Աւելի տաղանդաւոր և հանճարեղ քան Ռուսը, Թուրքը կամ Պարսիկը, այս արի և մտացի ժողովուրդը յայնժամ ասպարէզ պիտի գայ իբրեւ ախոյեան յառաջդիմութեան ի վերածնութիւն և ի քաղաքակրթութիւն իւր կէս-վայրենի դրացւոյ։

ՍՐՏԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Հայաստանը չէ՛ միաք վերացական,
Եւ ո՛չ գեղեցիկ ցնորք է հայրենիք,
Հայրենեաց սէրը չէ՛ պղատոնական,
Ո՛չ չաղփաղփանք է և ո՛չ սընոտիք.
Չէ՛ չէ՛, երգած չէ՛ դեռ մայր-Հայաստան
Կարապի երգը, երգն իւր տխրագին.
Այն որ լըսեցիք՝ այն երգ էր գարնան,
Աւետեաց երգ էր հայոց սոխակին.
Չէ՛ չէ՛, հայ աղգը չէ՛ աղգ հըներծած,
Անպիտան ղառակ այս նեղկայ գարին.
Նա դեռ իւր վերջին խօսքը չէ՛ յայտնած,
Հանճարն չէ՛ ցուցած օտար աղգերին.
Չէ՛ չէ՛, հայ աղգը չէ՛ աղգ անիծած,
Ինչպէս կրկնում են կարճամիտ մարդիկ,
Այլ՝ յոյնէն ասրած ու բերան առած
Աչքառկածոյծ, տընաքանդ կարծիք.
Չէ չէ, հայերը չեն անմիտրան.
Երբ որ խնդիր կայ ընդհանուր ազգի,
Երբ որ հայրենեաց պէտք լինի պաշտպան,
Բիւրք ատքի կելնեն ինչպէս մի հոգի.
Հայ ազգի սրտում, թէեւ թաղըտեան,
Կայ դանձ հազուագիւտ և յոյժ մեծագին —
Փրկութեան հաւատ, յոյս արդարութեան,
Սէր ազատութեան վառըն իւր ազգին.
Չէ չէ, դահիճք չեն լուսաւոր աղեղր,
Վըտահ եմ, նոքա չեն մոռթիլ հային.
Չի՛ յուսահատուինք, խմեղբայր հայեր,
Մեզ էլ իրաւունք կուտան մարդկային։
Գ.

«ԱՐՄԷՆԻԱ»ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՔԷՕՍԹԷՆՃԷ.—Մ. Թ. Ձեր ուղածը ղրկել տուինք։

ԹՈՒԼՃԱ.—Ս. Ց. Ղրկեցինք Ձեղ և Պր. Ե.ին Օրացոյցները։

Մ. ՀԷՐՄՕՆ.—Թ. Խ. Կարելի է ղրկել տոլար թղթադրամ։

ԵՈՆԲՐՍ.—Ց. Պ. և ՈՒՍԹՐՐ.—Ա. Բ. Ուղածնիդ ղրկեցինք. Ծաղածը մեկ ամսէ չափ յետոյ։

ՀԱՑԵՐ Ի ԹԻՒՐԲԻԱ

Պր. Թորոս Ջուղայեցի որ իւր տատուածաբանական ուսումն առած է Եւրոպայի մէջ և անցած տարի «Հայաստանեայց Եկեղեցի» անուն մի շաբաթաթերթի հրատարակեց Կ. Պոլսի մէջ, երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի վարժարանին աստուածարանութեան դասատու կարգուած է։

—Աղգ. Վարչութեան Խառն ժողովը կր խորհրդակցի Գումգափուի Պատրիարքարանը ընդարձակել իւր շրջակայներէ տեղ գնելով և վերանորոգել չէնքը։ Այդ գործիններ ծախու առնելու հաժար 1000 ոսկու չափ պէտք կը լինի զոր կը խորհին հանգանակութեամբ հաւաքել։

— Անգլիական, աւստրիական և ռուսական դեսպանատուններուն թարգմաններն եկած են մեր ազգային Պատրիարքարան, չնորհաւորել նորընտիր Պատրիարք Ամեն. Խորէն եպիսկոպոսի պաշտօնավարութիւնն։

Նոյնպէս Բոյներուն Պատրիարքին և Պուլկարներուն Էկզարքին կողմէն ներկայացուցիչներ եկած են մեր Պատրիարքարան, չնորհաւորելու համար Ամեն. Տ. Խորէն նորընտիր Պատրիարքին։ Այդ պատուիրակութիւնները հանդիսաւոր կերպով ընդունուած են։

— «Մանղուժի Էֆքեար» հայատառ լրագիրը որ Բ. Դրան հրամանով արգիլուած էր հրատարակութենէ, վերստին թոյլատուութիւն ստացեր է հրատարակութեան։

—Անուանի նկարիչ հայազգի Պր. Այվազովսքիի քեռորդին Պ. Մազիրով որ Կ. Պոլիս գալով իւր մօրեղբօր մի քանի նշանաւոր պատկերներն ցուցահանդէսի դրած էր, Կ. Պոլսէ մեկնելէն յառաջ, մէկ մէկ գեղեցկանկար պատկեր նուիրեր է իր մօրեղբօր կողմէն Միացեալ ընկերութեանց, Խառնիւղի Դալմայեան որբանոցին, Ազգանուէր Հայուհեաց ընկերութեան և Դպրոցասէր Տիկնանց ընկերութեան։

— Ամեն. Տ. Խորէն Պատրիարք վոխադարձ այցելութեան գնացեր է Ֆէնէրի յունական Պատրիարքարանը ուր մեծարանքով ընդունուեր և մի բանախօսութիւն կարդացեր է, մատնելով արեւելեան երկու քոյր եկեղեցիների միաբանութեանն համար։

—Արշնիի Բարձրհայեաց վանքի վանահայր Արժ. Տ. Յովհաննէս Վ. Փափազեան Առաջնորդական առժամանակեայ Տեղապահ կարգուած է Տիգրանակերտի վիճակին։

—Մուշի մէջ Յովհաննէս ապա անուն մի Հայի խանին սրճարանը բռնկելով, 2 մթերանոց, 2 սրճարան և 14 խանութ այրուեր են։

ՏԵՂԱԿԱՆ

Անցած կիրակի օր, ինչպէս փաթիզի մէջ, այստեղ ալ հանդիսաւոր կերպով ծանեցին Պօտէնի յիշատակը։ Մեծ բազմութիւն դրօշակներով դէպ Նայլի Սէն-Բիէըլի գերեզմանատունը ուր ճառեր խօսուեցան և պսակներ դրուեցան Պօտէնի մի քանի գաղափարակիցներուն գերեզմաններուն վրայ։ Պօտէնը որի յիշատակը այնչափ մեծ հանդէսով ծանուեցաւ Ֆրանսայի մէջ անցած կիրակի օր, մի երեսփոխան էր և երբ 1851ին դեկտ. 2ին Հանրապետութեան Նախագահ Լուի Նափոլէոնը պետական հարուածով տապալեց Հանրապետութիւնը ինքը կայսր լինելու համար, Պօտէնը ժողովուրդին դրդռեց յեղափոխութեան և բռնաւորին դիմադրութեան. 100ի չափ Ֆրանսացիներէն գլուխ անցնելով Սէնթ-Անթուանի արուարձանին մէջ մի պատնէշ կանգնեցին և կռուեցան Նափոլէոնի զօրքերուն դէմ։ Պօտէն գնտակահար մեռաւ այդ կռուի մէջ և իրենները յրուեցան։

— Անցած շաբաթ օր քաղաքս դէպի Նիս Եօրք մեկնեցաւ Տիգրանակերտցի այրի Աննա Սարրաֆեանը իւր օրբերով մէկտեղ որի ամուսնին սպանութիւը պատմած ենք Արմենիայի 16րդ թուով։ Իսկ Աննա Պատմաճեանը որ այդ սպանման դէպքին պատճառով բանտը կը գտնուէր, վրան խեղդարութեան նշանները երեւելուն համար բանտէն արձակուած և փոխադրուած է այդ հիւանդութիւն ունեցողների գարմանատունը (Asile des aliénés)։

Նոր հրատարակութիւններ

Շնորհակալութեամբ ստացանք ԱՂԲԻՒՐ միամեայ պատկերազարդ հրատարակութեան հոկտեմբերի և նոյեմբերի ամսաթերթերն։ Հոկտեմբերի ամսաթերթին մէջ կան Աղէքսանդր Գ Ցարին և Ցարուհուն, թագաժառանգ իշխանին և Մոսկուայ Ս. կաթողիկոսի պատկերները, Թիֆլիսի իշխանի պալատին և վօրոնձովի արձանի պատկերները։ Նոյեմբերի ամսաթերթին մէջ կան Ն. Կ. Բ. Իշխան Միքայել Նիկոլաեւիչի, Թիֆլիսի Առաջնորդ Գեր. Արխատակէս եպիսկոպոս Սեդրակեանի և թատերագիր Պ. Դարբինեան Սունդուկեանցի պատկերները, ինչպէս նաեւ «Աչուն»ի պատկերն։

ԸՆԴԱՐՁԱԿ

ՕՐԱՑՈՑՑ 1888 ԹՈՒԱԿԱՆԻՆ

Սեփականատէրն Ս. Փ. Ագգ. Հիւանդանոցին

Տպագր. Գ. Պաղտասարեան (Արաւեան)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. — Ցառաջիկայ տարուան ընդարձակ Օրացոյցը՝ բացի պարզ Օրացոյցէ՝ ճոխացած է հետեւեալ խիստ կարեւոր եւ օգտաշատ տեղեկութեամբք։

Օսմանեան կայսրութիւն — Սուլթան.—Աւագանի կայսերական Պալատան.—Նախարարք Բ. Դրան.—Մեծ պաշտօնատարք Մայրաքաղաքի.—Հրամանատարք բանակաց.—Կուսակալք Նահանգաց.—Դեսպանք և հիւպատոսք.—Հայրապետութիւն Հայոց.—Կեդրոնական վարչութիւն Հայոց Թուրքիոյ.—Ազգ. Կեդր. վարչութիւն, պաշտօնեայք Ազգ. Պատրիարքարանի.—Առաջնորդութիւնք Թուրքիոյ և հովուութիւնք.—Համագումար թաղղերից Կ. Պոլսոյ.—Բարեգործական և կրթական Ազգ. հաստատութիւնք. նոյն մասնաւոր հաստատութիւնք.—Հայ բժիշկք.—Հայ վաստարանք.—Ընկերութիւնք չոգեշարժ նաւարկութեան.—Ժամանակացոյց երթեւեկութեանց կառափոքոյ ընդ մէջ Կ. Պոլսոյ և Վիէննայի.—Սակագին տոմսակայ երթեւեկութեանց Կ. Պոլսոյ և արուարձանաց.—Գլխաւոր աղգաց դրամներուն բաղդատութիւնը.—Կանոնադիր հեռագրութեանց եւրոպական և ասիական քաղաքաց Թուրքիոյ.—Նիհ (Թարիֆա) հեռագրի միջազգային թելերու.—Եւրոպական Միջազգային թղթատարութիւնք.—Ժամանակացոյց սուրհանդակաց Օսմ. Միջազգային թղթատարութեանց.—Ցուցակ անուանց մերձաւոր երեխայից, արական և իգական սեռի.—Ժամանակացոյց ցամաքային թղթատարութեան ասիական Թուրքիոյ.—Ազգ և Մանուկմունք։

Ասոնցմէ զատ ընտիր առացուածոց հաւաքածոյ մ՛ալ ղետեղուած է դրան մէջ ինչպէս և առտնին խիստ ճոխ ու ամենակարեւոր դիտելիք, առողջապահական ծանօթութիւնք և գիտական տեղեկութիւնք։

Կը ծախուի Արմենիայի խմբագրատունը հատը 65 սանթիմ. Մարսէյլէ դուրս կը ղրկուի հատը 75 սանթիմի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսի անգլիական դեսպանատան առեւտրական կցորդը Կարլին գնացեր է, յատկապէս տեղեկութիւններ ստանալու համար Կարինի նահանգի առեւտրական և տնտեսական վիճակին վրայ։

—Անգլիական լրագիրներն մեծ արժէք կուտան Սըր Տրըմմընտ Վօլֆին Պարսկաստանի մէջ ձեռք բերած դիւանագիտական յաջողութեան որով թոյլատուութիւն ստացաւ Շահէն, նաւերի ազատ շրջագայութեանն համար Տարբն գետին վրայ։

—Ֆրանսայի Լիլ քաղաքէն կը հեռագրեն որ Պէլճիգայի Իրըզ քաղաքէն չոգեկառքով ղրկուած 400 հատ հացերը որ էր-սիւր-լա-Լիս պիտի ճանըւէին, Արմանթիէրի մագազաան մէջ կասկածելով վար դրեր են։ Հացերի

փոքրերը բանալով տեսեր են որ մէջը թիթեղէ փոքրիկ ամաններ դրուած են որոյմէ ամենք վառօդ և մի քանին ալ ուժանակ (ամոնիմիք) կը պարունակէին։

—Կարմիր և վանի նահանգներին մէջ սաստիկ ձիւն տեղացած լինելով, ճանապարհներն բոլորած են։

—Պարսկաստանի Շահը Ռուսիոյ մերժեր է հիւպատոսարան հաստատել Իչէսի մէջ։ Այդ մերժում սաստիկ գրգռութիւն պատճառած է ռուս մամուլին մէջ։ Կըսուի թէ ռուս կառավարութիւնը մտադիր է պատերական միջոցներով դիմել, եթէ Շահը չարունակէ իր հակառուսական ընթացք։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Grand almanach français illustré, publié par le *Musée des Familles*. Un fort vol, grand in-8, broché 1,50 *franco* 2 fr. Relié, 2,50 *franco* 3 fr. Librairie Ch. Delagrave, 15, *rue Soufflot*, Paris.

Le Grand almanach francais illustré publié par le *Musée des Familles* pour 1889 est un magnifique volume de 416 pages, grand in-8, imprimé sur papier teinté, qui constitue d'autant mieux un ouvrage de salon et de bibliothèque qu'il forme en réalité une véritable bibliothèque encyclopédique en même temps que le plus complet des annuaires et des calendriers.

A chaque jour de l'année est consacrée une page spéciale où se trouvent non seulement toutes les indications chronologiques et astronomiques indispensables, mais l'ensemble le plus varié de récits, d'études, de fantaisie, d'anecdotes, de recettes, accompagnés de superbes illustrations qui en relèvent l'intérêt. Nos conteurs les plus célèbres, les plus aimés, y sont représentés par quelqu'une de leurs œuvres les mieux réussies illustrées par les meilleurs dessinateurs. La science, l'histoire naturelle, l'histoire proprement dite, la géographie, les voyages, les choses humoristiques de la plume et du crayon, les jeux d'esprit, les notions utiles, les procédés usuels s'y entremêlent sans cesse et composent la mosaïque la plus variée qui se puisse imaginer; à travers le tout enfin sont disséminés les curieux tableaux de l'oracle des Familles, sorte de Calchas fantaisiste toujours de bonne humeur et de bon conseil qui va certainement jouir d'un grand crédit auprès des possesseurs de l'Almanach auquel il communique un caractère tout particulier.

Si nous ajoutons que ce recueil, qui est un livre de luxe dans la plus réelle acception du mot, est mis en vente au prix réduit du moindre volume ordinaire (1 fr. 50) nous pouvons prédire qu'un immense succès et du meilleur aloi attend le **grand almanach illustré** que le *Musée des Familles* publie pour 1889 et publiera désormais chaque année dans les mêmes conditions.

ՆԵՂՈՍ

Շաբաթական լրագիր Ալեքսանդրիա

ՆԵՂՈՍ լրագիրը պիտի հրատարակուի ամեն չորեքշաբթի օրերը։

Պիտի պարունակէ Ազգային կեանքի վրայ տեսութիւն և տեղեկութիւն. Արտաքին և Տեղական լուրեր. Նոյնպէս Զուեշտական, Բանասիրական և այլ օգտակար Յօդուած և դրութիւն։

Խմբագրութիւնս իր լրագրոյն մէջ միշտ կը հետեւցնակէ ամէն տեսակ դրութիւն որ լինի ընտիր, օգտակար և իր նպատակին յարմար։

—Սոյն լրագիրը հիմնուած է եղբայրական ընկերակցութիւնամբ և չարունակութիւնն եւս երաշխաւորուած պայմաններով։

—Լրագրոյս տարեկան բաժանորդագինն է ամէն տեղի համար 10 ֆր. և վերջավճարելի։

—Փոստային ծախքը Խմբագրութեանս կը վերաբերի։

—Լրագրոյս վերաբերեալ ամէն կարգի գրութիւնք պէտք է յղել հետեւեալ հասցէիս.

«Առ խմբագրութիւն ՆԵՂՈՍ լրագրոյ, Աղեքսանդրիա (Եգիպտոս). (բօսթ էժիբսիէն)։

A la Rédaction du journal arménien «Néghos», Alexandrie (Égypte). (Poste Égyptienne).

—Այս առթիւ սա եւս հարկ կը համարիմք յանուցանել թէ լրագրոյս վերաբերեալ ամէն թղթակցութիւնք և ընկալագիրք կ'ասորագրուին ՎԱՀԱՆ ՄԱՄՈՒԼԵԱՆի կողմանէ որ է լրագրոյս Տնօրէնը։

—Ամեն անունք որք կը վաճառքին լրագրոյս գործակալութեան և թղթակցութեան պաշտօնն ստանձնել, թող բարեհաճին ժամ յառաջ իրենց յանձնառութիւնը և հասցէն հաղորդել խմբագրութեանս։

Խմբագիր–Տէր
ԱՆՏՕՆ ՌՇՏՈՒՆԻ

10/22 Հոկտ. 1888
Աղեքսանդրիա

«ԱՐԱՔՍ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Նոր բաժանորդագրութեան առիթով

Արաքս պատկերազարդ հանդէսը կը հրատարակուի 1889 թուականին Պետերբուրգում, գարնեալ նոյն դիրքով և նոյն պայմաններով։

Հանդիսի բաժանորդագինն ամէն դասակարգի համար դիւրամատչելի անելու նպատակով թողնում ենք միևնոյնը — 3 րուբլի։

Առանց բացառութեան ոչ որի ապառիկ չի ուղարկուիլ. հետեւապէս առանց կանխիկ բաժանորդագնի պատուիրները միանգամայն կը մնան առանց պատասխանի։

Նուէրը ոչ մի անձի և ոչ մի լրագրի առանց վճարելիութեան չի ուղարկուիլ։

Արաքսը նեղքին և արտաքին կոչմից, անշուշտ, համեմատաբար աւելի աջող պայմաններում կը լոյսն է։

Արաքս ի առաջին դիրքը կը հրատարակուի մեծատառատիպ փետրվար ամսի ընթացքում, իսկ երկրորդը մայիսին։

Աբոնեմանի համար բաժանորդագինն է 40 դահեկան — պոստալ կամ 9 ֆրանգ և կամ 4 աւստրիական ֆլորին։

Արաքս առացնները և հանդիսի խմբագրութեան հետ գործ ունեցողները դիմելու են Սիմէօն Գուլամիրեանցին այս հասցէով.

St.-Pétersbourg, Siméon Goulamiriantz. Grafsky peréoulok 7. 22

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴԵՐ

Որովհետեւ մեզ 650 բաժնորդով սկսանք Արմենիայի Դ տարեշրջանը, նոյն համեմատութեամբ տպագրել տուած ենք իւրաքանչիւր թուէն։ Այժմ նոր բաժնորդների թիւն հետզհետէ աւելնալու վրայ լինելով և հոկտեմբեր ամսին մէջ հրատարակուած թիւերն սպառած լինելով, հարկ կը համարինք յայտարարելու թէ նոր դրուող բաժնորդներին չենք կարող ղրկել այլ եւս այդ թիւեր և թէ Արմենիայի բաժնորդագրութեան համար հետեւեալ նոր կարգադրութիւններն եղած են։

Մեր գլխաւոր նպատակ լինելով տարածել Արմենիայի միջոցով յայտնուած միտքերն և զգացումներն հայ ժողովրդի ամեն դասակարգերին մէջ, որոշած ենք առ այժմ ամենայն մինչեւ 1 ֆրանգի հաշուով բաժնորդագրութիւններ ընդունիլ։ Անոնց որ Արմենիային նպաստած և քաջալերած լինելու համար կը հաճին աւելի վճարել, կանխաւ կը յայտնենք մեր շնորհակալութիւնները։

Եգիպտոսի մէջ Արմենիան կը ծախսուի համը 20 փարայի (ոսկի դրամ), դրամական յարմարութեան և տեղական ինչ ինչ հանգամանքների պատճառով։

Բաժնորդագրութիւնները կսկսին ամեն ամսի մէկէն կամ 15էն և կանխիկ կը վճարուին։ Քանի ամսի համար որ ուզուի, կարելի է բաժնորդ գրուիլ, միայն թէ բաժնորդագրութիւնները կրնան ընդունուիլ մինչեւ Դ տարեշրջանի վերջին ամսուան միայն, այսինքն ՄԻՆՉԵՒ 1889 ՅՈՒԼԻՍ ԱՄՍԻ վերջ և Ո'Չ ԱՒԵԼԻ ՏԵՒՈՂՈՒԹԵԱՄԲ։ Այնուհետեւ, եթէ յաջողինք, մտադիր ենք նոր կարգադրութիւններ անել աւելի լաւ դիրքի մէջ դնելու համար Արմենիան։

—Ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ պէտք կունենան Արմենիայի միջոցով մեկին դիմում անել կամ մի բան յայտարարել, պատրաստ ենք ընդունիլ իրենց ծանուցումներ լսայլ լրագրական սովորութեան։ Ծանուցումների գիներն նշանակուած են Արմենիայի ճակատը, տասն վրայ հաշուելով. 1 երկսիւնգրի (գլխագիր) համար 2 առնդիմ և 1 բոլորգրի համար 1 առնդիմ։ 3 անգամ դրուելիք ծանուցումի գնին վրայ 0/0ին 10 պակաս կը լինի. 10 և աւելի անգամներ դրուելիք ծանուցումի գնին վրայ 0/0ին 30 պակաս։ Սակարկութիւն չընդունուիր։

ՀԱՅ ՊԱՏՄՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐՔ

1878ին Պէրլինի դնացած Հայ պատուիրակութեան պատկերքը՝ դեղեցիկ թղթի վրայ առնուած և պատուիրանների անուններն հայերէն և ֆրանսերէն տառերով միանգամայն տպագրուած, կը ծախսուի Արմենիայի խմբագրատունը։ Գինն է 1 ֆրանգ, փոստի ծախքն խմբագրատունէն վճարուելով։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ա. ՀԱՅ ԴԻՒՅԱԶՆՈՒՀԻ ՄՐ (Եւրոպաի մէջ բնակած մի Հայի Հայաստանի վրայ արած խորհրդածութիւններովը կը սկսի և մի Անգլիացու բերնով կը պատմէ Երեւանցի մի հայ աղջկան հաստատամտութիւնը մահմետական կրօնը չընդունելու և իր հայ նշանաձի հաւատարիմ մնալու համար), 50 սանթիմ.

Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ (Հայ գիւղացիների բուն վիճակը որ չատերին անծանօթ մնացած է, ուսումնասիրելու պէտքը կը ներկայացունէ), 20 սանթիմ.

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԼԻ (Հայաստանի աղատութեան ցանկացող մի Հայի մաղթանքներն և մտածումներն են Սաղմոսի ոճով գրուած), 40 սնթմ.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Դ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՅ

եւ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ

Աշխատասիրեաց
ՄԿՐՏԻՉ Ս. ԹՒՄԹԻՆՃԻՒՃԵԱՆ
Վիբաբոյժ ի Բանսոնոգ

«Առանց արեան ազատութիւն չկայ։»
ԼԻՒՊԻՆ ՔԱՐԱՎԷԼՕՖ

1888

Պրն. Մ. Թիմթինճիէֆֆի գրած «Պուլղարիոյ ազատութեան պատմութիւն»ը որ Արմենիայի Դ տարեշրջանի «Բանասիրական» բաժնին մէջ մաս առ մաս հրատարակուած է, այժմ առանձին տետրակով ևս հրատարակուեցաւ, աւելի եւս տարածելու համար հայ ժողովրդին մէջ։ Հրատարակիչն Մ. Փորթուգալեան, իր կողմէ եւս մի յառաջաբան գրած է այդ տետրակի սկիզբն, ցոյց տալով յեղափոխական մտքերի տարածման անհրաժեշտութիւնը հայ ժողովրդին մէջ։

Կը ծախսուի Արմենիայի խմբագրատունն ի Մարսէյլ և կամ Պրն. Մ. Թիմթինճիէֆֆի քով ի Ռուսճուք։ Գինն է 1 ֆր. և 50 սանթիմ, փոստի ծախքն վճարին հաշուելով։

ՏՆՕՐԻՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : Félix ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. Schickler rue Vacon 50.